№ 86 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 7 — 1905 — ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 7 № 86

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է առնն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, մայիս 8-ին, հանգուցեալ

ԴԱՒԻԹ ՇԱԼԱՄԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով Վերայի գերեզմանատան եկեղեցում կատարվելու է ս. պատարագ և ապա հանգուցեալի մահարձանի օրհնութիւնը։ Պատարագի սկիզբն է ժամի 10-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիմնարկութիւնների պահանջը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Հին-Ղրիմից. Նամակ Աստրախանից. Նամակ Ասխաբատից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

Ո՞վ պէտք է իրագործէ, ո՞վ պէտք է սկսած գործը շարունակէ, ո՞վ պէտք է ճոխացնէ և զարգացնէ օգտաւէտ ձեռնարկութիւնը—ահա այն հարցերը, որոնց հանդիպում ենք մշտապէս մեր առօրեայ կեանքում։

Նախաձեռնող ոգին հանդէս կը բերէ կարիքների և պահանջների բաւարարութիւն տալու բազմաթիւ առաջարկներ, բայց նրանց իրագործելու համար անհրաժեշտ են ոչ միայն մասնաւոր անհատների ջանքեր, այլ և որոշ հաստատութիւններ, մշտական հիմնարկութիւններ։

Մի առանձին անհատ, օրինակ, կարող է ունենալ մի լաւ դպրոց. բայց ոչ մի երաշխաւորութիւն չը կայ, որ այդ դպրոցը կը լինի յարատև և կը դառնայ ժողովրդական զարգացող ձեռնարկութիւններից մէկը։ Անհատի կեանքի անակնկալ փոփոխութիւնների հետ կարող է փոխվել և դպրոցի վիճակը, կամ բոլորովին վտանգվել և փակվել։ Մինչդեռ երբ դպրոցը կը լինի հասարակական հիմնարկութիւն, նա կախված չի լինիլ մի անձից, այլ հաստատութիւնից, որի կեանքը և գործունէութիւնը տևողական է և անվերջ։

Նոյնը պէտք է ասել ամեն մի բարեգործական, գիտական, արհեստագիտական հիմնարկութեան մասին։ Մասնաւոր անհատներ կարող են մեծ ծառայութիւններ մատուցանել թէ գիտութեան և թէ բարեգործական ասպարէզում և դարագլուխներ կազմել հասարակական ինքնաճանաչութեան և ինքնագործութեան ասպարէզում։ Բայց գործին ընդարձակ և լայն հասարակական բնաւորութիւն և տևողականութիւն տալու համար կարևոր է, որ նրանք ծնեն մի շարք հիմնարկութիւններ նոյն նպատակներին ծառայելու համար։

Մենք մի վայրկեան անգամ չենք ուզում փոքրացնել և նսեմացնել մասնաւոր նախաձեռնութեան նշանակութիւնը և կը ցանկանայինք, որ նա գործէր ազատօրէն, չը կաշկանդվելով ոչ մի խոչընդոտից։ Մենք չափազանց մեծ գին ենք տալիս մասնաւոր նախաձեռնութեան ստեղծագործական ոյժին և անհատական դատի ու անձնուիրութեան զօրութեան և գիտենք, որ մարդկային առաջադիմութեան մէջ նա կատարել է շատ մեծ դեր։ Սակայն մենք չենք մոռանում և այն, որ զուգընթացաբար պէտք է գործեն և հիմնարկութիւնները. մենք լաւ գիտենք, որ որքան ընդարձակ է կուլտուրական հիմնարկութիւնների ցանցը, այնքան ուժեղ է մեր ժողովրդի հասարակական ոյժը, այնքան անընկճելի է նա կեանքի ձախորդ պատահարներից։

Շատ աղքատ է մեր երկիրը հասարակական հիմնարկութիւններով և նա չէ կարող իր յոյսը դնել միայն մասնաւոր հերոսութեան, անձնուիրութեան կամ առատաձեռնութեան վրա, որոնք կարող են տասնեակ տարիներով հանդէս չը գալ։ Իսկ այն ինչ որ դժուար է մասնաւորներին, նա համեմատաբար աւելի հեշտ է խմբական կամ հաւաքական ոյժերի համար։

Մեր երկիրը պահանջ ունի հիմնարկութիւնների մի ընդարձակ ցանցի և մենք պէտք է կարողանանք այդ ցանցը կազմել և գործողների բազմութիւններ դրաւել դէպի արդիւնաբար հասարակական գործունէութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Աշխարհի ուշադրութիւնը Հեռաւոր Արևելքն է դրաւել, իսկ այդ միջոցին Մօտաւոր Արևելքը, հին պատմական հիւանդը, օրհասական ջղաձգութիւնների մէջ է։ «Русс. Вѣд.» լրագիրը ամենամայլ գոյներով է ներկայացնում այդ հիւանդի դրութիւնը։

Օսմանեան պետութեան փլման գործողութիւնը, ինչպէս երևում է բոլոր նշաններից, մօտենում է վախճանին։ Դեռ երբէք այդ պրոցէսը չէ արտայայտվել այնքան պայծառ փաստերով, ինչպէս ներկայ րոպէին։ Ապստամբութիւնները ամեն կողմից շրջապատում են նրա զառամած օրգանիզմը, և նա այլ ևս ոյժ չունի, որ զլուխ հանէ այդ ապստամբութիւններից։ Եմէնը անջատվեց, Կրետէն պատրաստ է միանալ Յունաստանին, Հայաստանը ալեկոծվում է, Ալբանիան պատրաստ է զէնք բարձրացնել, Մակեդոնիայում տիրում են չետաները։ Այս պրոցէսը վերին աստիճանի նշանակալից է։ Նա ցոյց է տալիս թէ ինչ բնական վախճան է ունենում մի պետութիւն, որ կառուցված է բռնապետական սկզբունքների վրա և փակել է իր մէջ հասարակական ոյժերի զարգանալու ելքը։ Կառավարութիւնը իրան անջատել է հասարակութիւնից չինական պատով և նրանից հեռացել է հասարակութիւնը այնպիսի մի ժամանակ, երբ աւելի կարօտ է այդ հասարակութեան աջակցութեան։

Բայց ինչպէս է որ Օսմանների պետութիւնը այդքան օրհասական ճգնաժամի է հասել։ Չէ՞ որ դարերից ի վեր նրան պահում, պաշտպանում էր եւրոպական պետութիւնների մրցակցութիւնը, չէ՞ որ եւրոպական դիպլոմատիայի համար միշտ պաշտամունքի կուռք է եղել Օսմանեան հողերի անձեռնմխելիութիւնը։ Լրագիրն ասում է որ այժմ այդ հին կուռքն է ջարդվում։

Մինչև այժմ Բ. Դուռը էլի մի կերպ կարողանում էր մաքառել բազմաթիւ ապստամբութիւնների դէմ, և այդ բանի մէջ նրան ամենից շատ օգնում էր Թիւրքիայի հողային անձեռնմխելիութեան պաշտամունքը, որից ոչ մի կերպ ձեռք վերցնել չէ կարողանում եւրոպական դիպլոմատիան։ Բայց, ինչպէս երևում է, այժմ այդ պաշտամունքը դադարում է պահպանել մինչև արմատները փտած սիւները։ Եւրոպական դիպլոմատիան զբաղված է ուրիշ, աւելի լուրջ հարցերով, իսկ Անգլիան, դատելով մի քանի նշաններով, վճռել է անկախ քաղաքականութիւն վարել Թիւրքիայում և այլ ևս նկատի չառնել ուրիշ պետութիւնների կարծիքները։ Այս բանը որոշակի կերպով արտայայտվեց Եմէնում։ Այնտեղ, ինչպէս յայտնի է, ապստամբված արաբները ջարդեցին Թիւրքաց զօրքերը, վերցրին նահանգապետի բնակավայրը և իրապէս նուաճեցին Արաբիայի հարաւ-արևմտեան անկիւնը։

Այս աջողութեան արաբները չէին կարող հասնել առանց մէկի օգնութեան։ Եւ արտասահմանեան մամուլը պարզապէս ասում է, որ արաբների խորհրդաւոր դաշնակիցը Անգլիան է։

Միևնոյն ժամանակ արաբական այս հզօր ապստամբութիւնը ցոյց է տալիս, թէ որքան մոլորված են այն մուսիւլման շովինիստները, որոնք կարծում են թէ կարող է համիալամական մի միութիւն կազմվել Թիւրքիայի հովանու տակ և Թիւրքիան պաշտպանելու համար։

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՂՐԻՄԻՑ

Ապրիլի 29-ին

Հին-Ղրիմում հայոց եկեղեցու վերաշինութեան հարցը՝ դեռ հանգուցեալ Խորէն եպիսկոպոսի օրով յարուցված՝ վերջապէս իր ցանկալի լուծումը ստացաւ։ Գլխաւորապէս շարժառիթը այն եղաւ, որ ներկայ եկեղեցու վերին աստիճանի խարխուլ պատերը սպառնում էին մի օր փլչել աղօթողների գլխին։ Եկեղեցին պատմական հիմնարկութիւն պէտք է լինի. ենթադրութիւն կայ, թէ այդ եկեղեցին շինված է եղել անեցի հայ գաղթականների օրով՝ գենովացիների (Կաֆայի և Սուդախի) տիրապետութեան ժամանակ։ Եթէ այդպէս է, նշանակում է այդ եկեղեցին հիմնված է XIV դարում, երբ գաղթական անեցիները իրանց կորցրած պանծալի Անիի բարեշէն պատկերը ճգնում էին վերականգնել հեռաւոր Ղրիմի գեղածիծաղ լեռներում։ Դժբաղդաբար, տակաւին չէ գտնված եկեղեցում ոչ մի արձանագրութիւն, որով կարելի լինէր որոշել հիմնարկութեան ճիշտ թուականը։ Դուցէ ապագայում պատերի միջից՝ սուաղի, ծեփուածքի տակից՝ դուրս գան արձանագրութիւններ։

Ասացինք վերաշինութեան հարցը վճռված խնդիր է։ Վարչական տեսակէտից ամեն ինչ կատարված է. կայ նաև անհրաժեշտ նիւթական զգալի մասը. պակասում է մի քանի հազար ևս, որը լրացնելու համար պէտք է օտար քաղաքացիներին դիմեն, որոնք, յուսով ենք, չեն զլանայ իրանց կօպէկները ուղարկել մի հիմնարկութեան, որի բեմը հայոց լեզուի ամբիոն լինելով, մի պատնէշ կը հանդիսանայ ապագայ սերունդի այլասերման դէմ... Այս ամսի (ապրիլի) 24-ից սկսել են եկեղեցու շինութեան գործը։ Նախահաշիւը կազմված է 11,700 ռ. գումարի, սակայն կապալով է տրված 11 հազարով։ Շինութեան ղեկը յանձնված է մի յոյն ճարտարապետի (պ. Խարլամբօ), որը, ինչպէս ասում են, իր մասնագիտական փորձառութիւնը ձեռք է բերել Պօլսի պալատական հայ ճարտարապետների մօտ։ Նոր եկեղեցին պէտք է շինվի նախկինի մեծութեամբ՝ 350 հոգու համար. շինութեան արտաքին ոճը՝ ըստ մակարդակի՝ մասամբ արևելեան է, բիւզանդականի խառնուրդով։ Եկեղեցին բոլորովին պատրաստ պէտք է լինի մօտաւորապէս նոյեմբեր—դեկտեմբերին—7—8 ամսից։ Նիւթական և վարչական մասերի հոգսը յանձնված է ծխականներից ընտրված յանձնաժողովին, որի կազմը հետևեալն է՝ Դ. քահ. Քէշիշեանց, Ն. Վարդանեանց, Գր. Բէնկլեանց, Մ. Բաբազինեանց և Ռ. Թումանեանց. նախագահն է պ. Վ. Նահապետեան, որը սակայն բացակայ է։

Կասկած չը կայ, որ վերոյիշեալ պարոնները իրանց վրա դրված հասարակական պարտաւորութիւնը պատուով կատարած կը լինեն այն ժամանակ, երբ խորապէս գիտակցեն ստանձնած գործի պատասխանատուութիւնը։

Սուրխաթեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Ապրիլի 13-ին

Սովորաբար թղթակիցներս նիւթ ենք վերցնում մեր կեանքից, հայկական շրջաններից միայն և շատ քիչ տեղեկութիւններ ենք տալիս օտար ազգերի կեանքից։ Մինչդեռ օտար ազգերն էլ մեր հետաքրքրութեան առարկան պէտք է դառնան, որովհետև մենք ապրում ենք նրանց հետ, կապված ենք ընդհանուր շահերով, նրանց հետ յարաբերութեան մէջ ենք։ Կողք-կողքի ապրող ազգերի փոխադարձ ծանօթութիւնը օգտակար է հէնց այդ ազգերին իրանց շահերի տեսակէտից։

Աստրախանը և իր շրջակայքը բնակեցրած են շատ տեսակ ցեղերով, մանաւանդ Թիւրքմօնգօլական ցեղերով, որոնց կեանքից շատ քիչ տեղեկութիւններ են լոյս տեսնում նոյն իսկ մեր տեղական ռուս թերթերում։ Այսպէս մենք չը գիտենք, թէ ինչով են դրանք հետաքրքրվում, ինչ ձգտումների երկրպագու են, կուլտուրական ենչ զարգացողութեան վրա են կանգնած։

Ինձ դրիչ վերցնել տուեց մի դէպք, որը տեղի ունեցաւ այս օրերս Աստրախանից 15 վերստ հեռաւորութեան վրա գտնվող «Բաղմակօվկա» թիւրքական գիւղում, որը մի լաւ ապացոյց է այդ տարրի կուլտուրական կատարեալ յետամնացութեան։ Պատմենք այդ դէպքը։

Յայտնի է, որ Աստրախանը պատրաստութիւններ է տեսնում խօլերայի առաջն առնելու համար։ Այդ առիթով և այդ գիւղում բաժանվում են թիւրք լեզուով գրած թերթիկներ, որոնցով բացատրվում են խօլերայից պատսպարվելու միջոցները։ Սակայն թիւրք ազգաբնակութիւնը, ինչ ասել կուզէ, այդ բանին տալիս է իր բացատրութիւնը և ամեն ինչ համարում բժիշկների հնարած և ապաւինում Ալլահին։ Հետևանքը հասկանալի է. գիւղացիների տրամադրութիւնը սրվում է և վճռում են ակտիվ ցոյցի դիմել, եթէ կառավարութեան միջոցները սկսեն գործադրվել։

Սակայն ցաւալին այն է, որ ցոյցի առաջին զոհը քիչ էր մնում դառնար բոլորովին ուրիշ անձ, որ բժշկականութեան և խօլերայի հետ ոչ մի առնչութիւն չունի։ Պատահաբար հէնց թերթիկների բաժանման հետևեալ օրը ժողովրդական դպրոցների ինսպէկտոր պ. Սօկօլով պտոյտ գործելով քաղաքի շրջակայքը, ի միջի այլոց գալիս է յիշեալ Բաղմակօվկա գիւղը։ Հազիւ մօտենում է շոգենաւը, գիւղացիների 80 հոգուց բաղկացած ամբոխը մօտենում է շոգենաւին և գոչում. «ո՞վ է գալիս, բժիշկին էք բերում, կոչէ՛ նա»...։ Աղմուկը այնպէս սաստկանում է և՝ ամբոխը ստուարանում, որ շոգենաւի վրա եղած ճամբորդները լուրջ կերպով սկսում են երկիւղ կրել։ Շոգենաւից աշխատում են բացատրել, թէ բժիշկ չը կայ նրանց մէջ, այլ դպրոցների ինսպէկտորն է, որին շատ անգամ գիւղացիները ընդունել և ճանաչում են, սակայն ամբոխը արդէն վայրագութեան հասած, ոչինչ չէ ուզում լսել և յարձակվում է շոգենաւի վրա, կայիւտների պատուհանից սկսում է դիտել և գոչել. «տուէք մեզ բժշկին»։

Ով գիտէ ինչով գործը կը վերջանար, և շատ հաւանական է, որ ինսպեկտորը զոհ գնար ամբոխի կատաղութեան, եթէ պարոնին ուղեկցող քաղաքի թիւրքաց դպրոցի ուսուցիչ պ. Իսկենդերօվը առաջ չանցնէր և թիւրքերին բացատրութիւն չը տար՝ թէ դա բժիշկը չէ, այլ դպրոցների ինսպէկտորը, որը այդ միջոցին կանգնած է լինում ուսուցչի ետևում։ Ամբոխը դառնում է ուսուցչին և գոչում. «երդուիր Ալլահի անունով և ասա մեզ ո՞վ է սա և ինչի է եկել»։ Թիւրք ուսուցիչը երդվում է, որ պարոնը բժիշկ չէ և սկի չէ եկած խօլերայի գործով։ Այդ հանդիսաւոր երդման ազդեցութեան տակ ամբոխը մի քիչ հանգստանում է և փորձանքը անցնում։

Այդ դէպքը բնորոշ է հէնց այն կողմից, որ նոյնանման ամբոխային ցոյց խօլերայի ժամանակ, ջարդ և անկարգութիւն տեղի ունեցաւ Ասխաբադում 1892 թ-ին։ Այժմ անցել է 13 տարի այն օրից և ինչ ենք մենք տեսնում։ Մեր հասարակական գիտակցութիւնը ոչինչով չէ փոխվել։ 13 տարվայ մէջ ժողովուրդը մնացել է նոյն խաւարի մէջ։ Խօլերայից պաշտպանվելուն չէ հաւատում։ Այդ թերահաւատութիւնը նկատվում է ոչ միայն թիւրքի, այլ և քաղաքի ռուս խաւարի մասնայի մէջ։ Իսկ մենք ինչ ենք անում։ Ինչո՞վ ենք կռուում դրա դէմ։ Թողնենք ռուս-

ների և հայերի մասին խօսելը, մի քանի խօսքով ուրուագծենք, թէ ինչ է արված թիւրքերի կուլտուրական մակերևոյթը բարձրացնելու համար։

Վերցնում եմ Աստրախանի շրջակայքը։ Այն գաւառը, որտեղ տեղի է ունեցել յիշեալ անցքը, գտնվում է քաղաքի հարաւ-արևմտեան մասում և քաղաքի հետ միասին ունի 28,000 թիւրք ազգաբնակութիւն, իսկ Կրասնիյ-Եար կոչված շրջակայքը, որը ընդգրկում է քաղաքը հիւսիս-արևելեան կողմից, ունի 22,000 ազգաբնակութիւն։ Այդպիսով քաղաքի շուրջը օղակաձև բռնված է 50,000 թիւրքերով։ Ամբողջ նահանգում աւելի շատ։ Եւ ինչ է արած ժողովրդական կրթութեան համար այդ 50,000 հոգուց բաղկացած շրջակայքի համար։ Մի քանի մէքտէբներ և մէդրէսներ, որոնք նոյն դրութեան մէջ են, ինչ որ 300—400 տարի առաջ և որոնք երբէք չեն կարող կրթական նշանակութիւն ունենալ, գալիս են լրացնելու դպրոցների պակասը։ Իսկ կանոնաւոր դպրոց Աստրախանի ամբողջ լայնածաւալ նահանգում, որի տարածութիւնը 40,766 քառակուսին է, կայ միայն, ինչ էք կարծում, մէկ հատ տղայոց միդասեան դպրոց։ Այդպիսով քաղաքում նոյն թիւրքերը չունեն իրանց համար ոչ քաղաքային 4 դասարանեան, ոչ օրիորդաց դպրոց, չունեն աշակերտներ նոյն իսկ միջնակարգ դպրոցներում։ Այդ կողմից դրանք յետ են նոյն իսկ դալմուղներից և զրդղներից, որոնք թէև աննշան թւով, սակայն տալիս են աշակերտներ գիմնազիան, մինչդեռ յիշեալ Զօլոտոյ օրդայի մնացորդները և ոչ մի սան։ Դեռ պէտք է զարմանալ, որ ինչպէս է մինչև այսօր այդ ազգը կրում է իր վրա խաղաղ բնաւորութեան ենթք և սիրում է լուրջ կերպով աշխատանքը, սրբութեամբ պահում է իր բարոյական յատկանիշները։ Մենք չենք տեսնում փողոցներում ոչ մի հարբած թիւրք, ոչ էլ յիշոցներ տուող, այլ միշտ խաղաղ և չարքաշ աշխատող։

Շատերը զարմանում են, թէ ինչու այդ դէպքը տեղի ունեցած ժամանակ մօլլաները չեն միջամտել և չեն աշխատել մտքերը խաղաղացնելու։ Դա շատ հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենանք, որ այդ կրօնաւորները ժառաւորապէս ոչնչով բարձր չեն կանգնած իրանց հօտից։

Մենք չը գիտենք իսկապէս Կովկասում կամ մի ուրիշ տեղ հրատարակվող թիւրք թերթերը հանում են մեր թիւրք ազգաբնակութեան ձեռքը, և թէ յիշեալ թերթերը ունեն թղթակիցներ մեր քաղաքում, որպէս զի քիչ թէ շատ խթան հանդիսանան մեր եղբայրակից թիւրքերի կուլտուրական զարգացման, սակայն մենք վերցրինք մեր վրա այդ թեթև փորձը, որպէս զի միջոց տանք թիւրք մամուլին ուշադրութիւն դարձնելու մեր նահանգի թիւրք տարրի կուլտուրական զարգացման վրա։ Այդ ստուար մասսան այդպէս թողնել չէ կարելի։

Հրաւիրում ենք այդ բանի վրա և մեր քաղաքային վարչութեան լուրջ ուշադրութիւնը։ Պէտք է թիւրքաց դպրոցների թիւը աւելացնել։ Պէտք է այդ բանի մասին մտածեն և իրանք գիտակից թիւրքերը։ Թող նրանք օրինակ վերցնեն իրանց ցեղակից Կազան քաղաքի թիւրքերից։ Այդ քաղաքում և նոյն իսկ նահանգում թիւրք-ռուսական դպրոցները բաւականաչափ են թւով և սրանց արդիւնքը շատ աշկարա է այնտեղ։

Ս. Տոփչանեան

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱՏԻՑ

—

Ապրիլի 16-ին

Ասխաբատի գործակատարները՝ նման ուրիշ քաղաքների իրանց ընկերներին, ապրիլի 10-ին հաւաքվել էին տեղական ժողովարանի դահլիճը։ Նրանք եկել էին իրանց տաժանակիր աշխատանքի ժամերը կրճատելու և ուրիշ մի շարք խնդիրների մասին խորհրդակցելու համար։

Նախագահը մի քանի խօսքով բացատրեց ժողովի նպատակը ներկայ եղողներին և ապա մի առ մի թուեց այն խնդիրները, որոնք պէտք է քննութեան ենթարկվէին այդ ժողովում։

Բացի գործակատարներից, որոնք թւով 60—70 հոգի կը լինէին, այդտեղ ներկայ էին մի երկու վաճառականներ ևս։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, որ տևեց ամբողջ երեք ժամ, ժողովը ընդունեց հետևեալ որոշումները։

1. Տարին բաժանել երեք մասի։ Ա. մասի՝ նոյեմբեր, դեկտեմբեր, յունվար և փետրվար ամիսների աշխատանքը սահմանափակել 11 ժամով. առաւօտը բաց անել ժամը 8-ին, երեկոյեան կողպել 7-ին։ Բ. մասի՝ մարտ, ապրիլ, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների աշխատանքը 12 ժամով. առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 8-ը, որից մի ժամ ազատ. (ճաշը առանձին)։ Գ. Մասի՝ մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամիսներինը 10 ժամով։ Առաւօտեան ժամի 8-ին բաց անել մինչև կէսօրվայ երկուսը, երկուսին փակել մինչև ժամը 4-ը շոգերի պատճառով և չորսից բանալ մինչև երեկոյեան 8-ը։ 2. Խանութատէրերի վերաբերմունքը խիստ քաղաքավարի դէպի գործակատարները։ 3. Առևտուրը առանց սակարկութեան։ 4. Ճաշը փոխադարձ համաձայնութեամբ։ 5. Իւրաքանչիւր գործակատար՝ լինի նա փոքր թէ մեծ, այդ մի և նոյն է, առանց ռոճիկի չէ ծառայում։ 6. 1—2 տարի ծառայող գործակատարը տարվայ ընթացքում իրաւունք ունի օգտվել մի ամիս արձակուրդով, 3—5 ծառայողը $1^1/_2$ ամիս, իսկ 5 տարուց աւել ծառայողը 2 ամիս, առանց ռոճիկը կորցնելու։ 7. Առանց յարգելի պատճառի արձակվող գործակատարը պէտք է ստանայ 2 ամսվայ ռոճիկ։ Իսկ երբ գործակատարը ինքն է ուզում դուրս գալ, պէտք է 15 օրով առաջ իմաց տայ գործատիրոջ։ 8. Գործակատարը պէտք է որոշված ժամին անպատճառ ներկայ լինի գործին և բարեխիղճ և լուրջ վերաբերվի դէպի իր ստանձնած պաշտօնը։ 9) Եթէ գործակատարը երեք օր գործի չի գնայ և այդ բացակայութիւնը շաբաթվայ մէջ մի քանի անգամ կրկնվի, նա զրկվում է պաշտօնից և մի ամսվայ էլ ռոճիկից, եթէ միայն նախօրօք թոյլտուութիւն չի ստանում տիրոջից։ 10) Եթէ գործակատարը լուրջ հիւանդ լինի և այդ մասին բժշկից վկայական ունենայ պաշտօնից չի զրկվում և ստանում է մի ամսվայ ռոճիկ։ 11) Գործակատարը պէտք է ռոճիկ ստանայ ամիսը 2 անգամ, 1-ին և 15-ին։ 12) Գործադուլի ժամանակ և գործադուլից յետոյ, գործակատարը չէ զրկվում ոչ ռոճիկից և ոչ էլ պաշտօնից։

Այս որոշումները ընդունելուց յետոյ, ժողովը ընտրեց դրա համար յատուկ մի ժամանակով և յանձնարարեց նրան բանակցութեան մէջ մտնել խանութատէրերի հետ և իրագործել։

Մարդավայել կեանք... ահա ինչ են ուզում ձեռք բերել այդ պահանջներով գործակատարները, այդ ոտի վրա չորացած ստուերները... Չէ որ նրանք էլ մարդիկ են, նրանք էլ իրաւունք ունեն լաւ ապրելու, ազատ կեանք վարելու...։

Եւ ինչու չը տալ նրանց այդ իրաւունքը...

Աբ. Բաղդասարեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս 5 մայիսի

Վեհափառ Կաթողիկոսի հաստատած յանձնաժողովը Բագուի զոհերի օգտին պ. Մովսէս Իւզբաշեանի ձեռքով Շուշի քաղաքի հայ հասարակութիւնից ստացել է 646 ռուբլի։

Գանձապահ յանձնաժողովի

Ա. Մելիք Ազարեան

Քարտուղար Ե. Թուխչեան

II

Թիֆլիս, ապրիլի 19 ին

Կարդալով «Մշակի» № 80-ում Թիֆլիսի քահանաներին վերաբերեալ յօդուածը, չեմ կարող չը պարզել մի քանի կէտեր այդ հարցի առիթով։

Յօդուածագիրը բացականչում է «Ինչու՞ պէտք է մէկը շատ ստանայ և միւսը քիչ, քանի որ մի և նոյն եկեղեցու և մի աստիճան ունեցող սպասաւորներ են», և այլն։ Այո՛, շատ իրաւացի պահանջ է. մի արդար ու ճշմարիտ դատողութեան արդիւնք... Սակայն «հաւասարութիւն» աղաղակողները արդեօք մտաբերում են իրանց գաւառացի պաշտօնակիցներին, ամբողջ լոկ մի բօպէ մտնելով նրանց դրութեան մէջ, համեմատութիւն արել են իրանց և գաւառացի քահանաների կենցաղավարութեան մէջ։ Պարզ է, որ ոչ։

Ասացէք թնդրեմ, կարելի՞ է այդ աստիճան աչքս թող անել գաւառացի քահանաների վատթար վիճակը և տքնել նրանցից աւելի փարթամ ու ճոխ կեանք վարող քահանաների դրութիւնը աւելի ևս բարելաւել... Ո՛չ, Թիֆլիսի քահանաները աւելի շուտ պէտք է աշխատէին գաւառացի քահանաների թշուառ և գրեթէ անել դրութեան մասին հոգս քաշել, քան թէ ագահութիւնից դրդված՝ ցանկանալ և ժողովներ կազմել իրանց գրպանները հաւասարեցնել Թիֆլիսի ամենահարուստ քահանաների գրպանների հետ։ Հաւասարութեան մասին այդպէս միակողմանի պէտք չէ մտածել ու աշխատել, այլ, իմ կարծիքով, աւելի իրաւացի և արդար պահանջ կը լինէր եթէ քահանաների ժողովների նպատակը լինէր հարուստ քահանաների հասոյթների գումարներից մի փոքրիկ բաժին պակասեցնել և գաւառացի խեղճ քահանաներին յատկացնել։

«Մշակ»-ի էջերը ի չարը գործ չը դնելու համար ես աւելորդ եմ համարում մանրամասն փաստեր բերելով՝ ապացուցանել այն, թէ ինչ աստիճան Թիֆլիսի քահանաների դրութիւնը աւելի ապահովված է գաւառական քահանաների դրութիւնից։

Թիֆլիսի քահանաները ցաւելով ասում են. «Անհրաժեշտ է քահանայի բարոյական արժանիքը բարձրացնել, իր կոչման բարձրութեան հասցնել» և այլն։

Այո՛, այդպէս պէտք է անել. շատ ուրախ ենք, բայց, եթէ մինչև հիմա ձեր պատիւն ու արժանաւորութիւնները կորած և նսեմացած էր ժողովրդի առջև, մի՞թէ նրանք են մեղաւոր։ Ամեն մի անձնաւորութեան պատիւն ու յարգանքը՝ լինի նա հոգևորական թէ աշխարհական, իր ձեռքին է, որը կարող է թէ վսեմացնել և թէ նսեմացնել...

Վերջացնելով գրութիւնս, կասեմ, շատ ցանկալի է, որ մեր հոգևոր կառավարութիւնը վերջ դնէր քահանայական հասունացած և մթան մէջ խարխափող խնդրին և, բարեաւէր ոչ թէ միայն Թիֆլիսի քահանաների առանց այն էլ բարւոք դրութեան մէջ գտնվող կեանքը, այլ ամբողջ Կովկասի քահանաների, սարկաւագների և տիրացուների աննախանձելի վիճակը։ Եւ որպէս զի նիւթական հաւասարութիւն լինի բոլոր եկեղեցիների սպասաւորների համար և, ժողովրդի ու քահանաների միջև առնութիւն ու անհամաձայնութիւններ տեղի չունենան, լաւ կը լինի, որ ինչպէս աթոռահաս արդիւնքները քահանաներից վերցվում և ուղարկվում են հոգևոր իշխանութեան, այնպէս էլ բոլոր ծիսակատարութիւնների արդիւնքները ուղարկվեն հոգևոր իշխանութեան դրամարկղին, իսկ յիշեալ դրամարկղի կամ դրամարկղներից (ամեն մի թեմի համար մի դրամարկղ գոյութիւն ունենայ) համահաւասար ռոճիկներ ստանան բոլոր քահանաները։ Այդ բանը իրագործելու համար, անշուշտ հարկաւոր է, նախ մի ընդհանուր ժողով կազմել բոլոր գործականների և երեցփոխների մասնակցութեամբ և, ամեն մի քաղաքի կամ գիւղի ժողովուրդը բաժանելով 4—6 կարգերի, բարեխղճաբար նշանակել ինչպէս տուրք, որոշված գումար ամեն մի ծիսակատարութեան վրա։

Մեծ յոյս ունենք, որ մեր թեմական առաջնորդը շուտով վերջ կը տայ այս կարևոր խնդրին և կը թեթևացնէ նմանապէս և գաւառացի քահանաների աննախանձելի վիճակը։

Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։ Յաւելուածական թերթում զետեղված է Բագուի զոհերի օգտին նուիրատուութիւնների ցուցակը։

—

Երէկ, մայիսի 6-ին, Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի անուանակոչութեան տօնի առիթով Թիֆլիսը զարդարված էր դրօշակներով։ Քաղաքի շատ փողոցներում հնչում էին զինուորական նուագները, որովհետև զանազան զօրամասերից վաշտեր հաւաքվում էին Ալէքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարը մաղթանքին և զօրահանդէսին մասնակցելու։ Այս անգամ տօնական մաղթանքը և զօրահանդէսն առանձին շուքով կատարվեց, որովհետև նոր ժամանած փոխարքան ներկայ եղաւ հանդիսին։ Մաղթանքին և զօրահանդէսին ներկայ էին փոխարքան, նրա օգնականները, զինուորական ու քաղաքացիական բոլոր բարձր պաշտօնեաները և ահագին բազմութիւն։ Մաղթանքի ժամանակ արսէնալից որոտացին թնդանօթի 21 հարուածները։ Մաղթանքներ կատարվեցին հայոց Վանքի մայր եկեղեցում և միւս դաւանութիւնների աղօթատներում։ Երեկոյեան քաղաքը զարդարված էր ճրագներով։ Տեղի ունեցաւ շքեղ հրավառութիւն։

—

Երէկ, մայիսի 6-ին, ցերեկվայ ժամը 3 ին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի պատուիրակները — Սուրէնեան արքեպիսկոպոսը և Յուսիկ ու Խորէն վարդապետները ներկայացան Նորին Գայծառափայլութեան Կովկասեան Փոխարքային բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետի կողմից։ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը մի կարճ ճառ արտասանեց, յայտնելով Հայրապետի բարեմաղթութիւնները և ակնարկելով այն յոյսերն ու սպասելիքները, որ ունեն Վեհափառը, հայ եկեղեցին ու ժողովուրդը։ Նորին Գայծառափայլութիւնը պատասխանեց այդ ճառին, յայտնելով իր շնորհակալութիւնները եղած բարեմաղթութիւնների համար, յանձնարարեց Նորին Վեհափառութեան իր շնորհակալութիւնները յայտնել, ասելով, որ անձամբ կայցելէ Վեհափառին։

—

Կովկասի փոխարքայի դիւանը պահանջել է Թիֆլիսի և Բուքայիսի ազնուականների պատգամաւորական ժողովներից այն բոլոր հարցերը, որ այդ ժողովները երբ և է քննութեան են ենթարկել՝ Կովկասի նահանգներում զէմստվո ներմուծելու վերաբերութեամբ։

—

Մեզ հաղորդում են, որ դիտաւորութիւն կայ Անիի հին կամուրջի հիմքերի վրա շինել փայտեայ կամուրջ և այդպիսով հաղորդակցութիւն ստեղծել Ախուրեանի երկու ափերի մէջ։ Կամուրջ շինելուց յետոյ Անիի յարաբերութիւնը երկաթուղու գծի հետ կը բարւոքվի։ Կամուրջ շինելու համար անվում են ներկայումս նախապատրաստական գործողութիւններ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Սէնատի վճռաբեկ մասում ապրիլի 30-ից սկսվել է Մեծ Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչին սպանող Կոլեայեվ ուսանողի դատի վերաքննութիւնը։ Պաշտպաններն են — Ժդանով, Մանդելշտամ և Բէրէնշտամ յայտնի փաստաբանները։ Քննութիւնը, թէև օրէնքով պէտք է լինի դռնբաց, ինչպէս սէնատի բոլոր քննութիւնները,—փաստացի կերպով դռնփակ է կատարվում, ասում է «Б. Вѣд.» լրագիրը, որովհետև տոմսակներով են ներս թողնում մարդկանց, իսկ տոմսակները տալիս են միայն մի քանի յայտնի անձերի։

—

Թիօնէթի շրջակայքում զետեղված բատալիօնի ամարային բանակատեղի պահապան զինուորներից մէկը մայիսի 4-ին սպանված գտան, իսկ միւսը անյայտացել է։ Գողացվել են պետական 2 հրացաններ։ Եռանդուն միջոցներ են ձեռք առնված գտնելու և ձերբակալելու անյայտացած զինուորին։ (Ի. Օ.)

—

Կարսի շրջանական վարչութիւնը Կովկասի գլխաւոր վարչութեանը խնդիր է ներկայացրել, որ Կաղզվան աւանի անշարժ կայքերի վրա դրված հարկերն ու տուրքերը պակասեցնեն, որովհետև աւանում բնակվող Դերբենդեան 154 դ հետևակ գունդը, որ քրէհած ունէր բազմաթիւ շէնքեր,—հեռացել է Կաղզվանից և տները դատարկ են մնացել, իսկ զբաղվածների էլ եկամուտները չափազանց պակասել են։

—

Մայիսի 4-ին, Թիֆլիսում, ոստիկանական վարչութեան մէջ, առանձնապէս կարևոր գործերի քննիչ պ. Լեախովիչն սկսեց հարց ու փորձի ենթարկել մօտ 20 վկաների, որոնք տեղեկութիւններ ու անձնական փաստեր ունեն փետրվարի 6—9-ին Բագուում տեղի ունեցած արիւնալի ընդհարումների մասին։

—

Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) Փ. Վարդազարեան—«Վշտի ու թախիծի երգիչ Յովհաննէս Թումանեան» (Քննադատական փորձ), Թիֆլիս, «Հերմէս» տպարան, 72 երես, գինը 20 կ.։ 2) Պետրոս Դուրեան «Բանաստեղծութիւններ», ժողովածու, խմբագրեցին Հր. և Աւ., Շուշի, 64 երես, 10 կոպէկ։ 3) Գ. Մօնտէգացցա—«Հիւանդ սէր», Բ. տպագրութիւն, թարգմանութիւն Ա. Գ. Դ. Ե., Ալէքսանդրոպոլ, 260 երես, գինը 40 կոպէկ։

—

Տիկ. Վ. Ա. Վէրմիշեան խնդրում է մեզ տպել հետևեալ հաշիւը. «Մարտի 7-ից մինչև մայիսի 1-ը նա ստացել է նուիրատուութիւններ է նպաստ ՁՆասված բագուցիների հետևեալ անձերից.—հայերի խմբից Ցարսկիէ-Կոլոցիից 69 ր. 50 կ., Գ. Ա.—ից 1 ր. 60 կ., Ա. Կալինովայից և Կ. Գ—ից (Կիեվից) 30 ր., տ. Զիչիբաեվայից 3 ր., կազմարարների և արկղ շինողների համքարներից վճռով և կամաւոր 44 ր. 25 կ., ընդամենը 148 ր. 35 կոպէկ։ Դուռ ջուց Ռնացած 110 ռուբլու հետ կանէ ընդամենը 258 ր. 35 կոպէկ։ Բաժանված է. հիւսնդ Պետրեշվիլիին 5 ր., Վ դասատան գիմնազիստ Գ—վին Բագու գնալու ճանապարհածախս և փող 30 ր., Զմբախ Թառայեանին 10 ր., բէալական դպրոցի VII դ դասատան աշակերտ Ա—քին ուսման վարձ 32 ր. 50 կ., Աբրիեվի ընտանիքին տոմսակներ Բագուում և փողով 20 ր.։ Զանազան ժամանակներում Նիկողոսեանին, Տէրէնտիեվին, Վլադիմիրովին, Մխիթարեանին և Կօսցէնկօին տոմսակներ Բագու գնալու համար և փողով 32 ր., Ն—եանցին—12 ր., Տէր-Օհաննէսեանցի ընտանիքին 10 ր., Մխիթարեանցին տոմսակ Նախիջևան գնալու համար և փողով 20 ր., Զիլինգարեանցին—10 ր., Ակօբջանովին—20 ր., տրված է Բագուում ուսուցիչ Ս. Ս—ցի աւերված ընտանիքին 50 ր., Վիրաբեանցին 5 ր., մանր դրամով տրված է 1 ր. 85 կ., ընդամենը բաժանված է 258 ր. 35 կոպէկ։

—

Ժողովրդական լուսաւորութեան և բարեգործութեան ասպարէզում գործող կանանց ընդհանուր, հասարակական ժողով հրաւիրելու հարցը, որ իր ժամանակ թոյլատրել էին ֆոն-Պլեվէն, իշխան Սվեատոպոլկ-Միրսկին և հօֆ-մայստէր Բուլիգինը և որը պէտք է կայանար առաջիկայ յունիս ամսին, յանձնված է Պետերբուրգի գեներալ-նահանգապետին ի հաստատութիւն։ Ներկայումս ընկերութեան խորհուրդը նպատակայարմար է գտնում համաժողովը յետաձգել դեկտեմբերին։ Սակայն համաժողովի բաղդը կախված կը լինի այն պայմաններից, որ կը դնէ գեներալ-նահանգապետը։

—

«Новости» լրագիրն ասում է, որ պետերբուրգում ստացված մասնաւոր հեռագրի հիման վրա՝ ապրիլի 25-ին Ժիտոմիրում կոտրածի ժամանակ սպանվածների դիակներն այնքան են այլակերպված, որ կարելի է եղել ճանաչել միայն ուսանող Վայնշտէյնի դիակը։ Հիւանդանոցում այժմ պառկած են 75 վիրաւորներ, որոնցից 50-ը բաւական վտանգաւոր։ մի քանիսի կեանքը վտանգի մէջ է։ Պոդոլում, քաղաքի ծայրի աղքատ թաղում, հրէաների բոլոր տները կողոպտված են։

—

Արձանագործ Գինզբուրգը շինել վերջացրել է յայտնի ռուս հրապարակախօս Ն. Կ. Միխայլովսկու բրօնզէ արձանը։ դա կաղապարն է, որի նմանութիւնով շինվելու է իսկական մեծ արձանը գրանիտից։ (Р. В.)

—

«Русь»-ը լսել է, որ Կովկասի սահմաններից դուրս աքսորված հայ հոգևորականների դատը վերաքննութեան է ենթարկվելու ներկայումս Կովկասի նոր վարչութեան կողմից, և որ այդ հոգևորականներից մի քանիսն արդէն ազատվել են իրանց վրա դրված պատիժներից։

—

Հարկաւոր ենք համարում ուղղել մի տպագրական սխալ, որ սպրդել է «Գաւառական մի օգտաւէտ գործիչ» յօդուածի մէջ «Մշակի» № 72 ում։ Փոխանակ «Պուլունց սուդիի» պէտք է լինի «Ղուլունց սուդիի»։

—

ԹԱՂԼԱՐ գիւղից (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Այստեղ բաւական ՁՄաներ հացրեց «պոկոր» (կարմրուկը), որից մեռնում էին օրեկան 23 հոգի։ Վարակվում էին նաև տղամարդիկ և կանայք։ Այդ վարակիչ հիւանդութիւնը կամաց-կամաց տալիս է իր վերջնական հրաժեշտը։ Գիւղի կեղտոտութիւնը աննկարագրելի է, այնպէս որ ամէն անգամ կարելի է սպասել վտանգաւոր դէպքերի։ Չը նայելով որ խոլերան սպառնում է, այստեղ մտածել անգամ չեն ուզում մաքրել այն կեղտերը և գլխաւորապէս արտաքնոցները, որ շինված են աղբիւրի վերևներում և որից գիւղի համարեայ մի մասը ջուր է վերցնում»։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ապրիլի 24 ին տեղիս ս. Գէորգ մայր եկեղեցում, գործակալ Աբել աւագ քահանայ Սուքիասեանցի նախագահութեամբ կայացաւ առաջին և ընդհանուր ծխական ժողով նոյն եկեղեցու համար նոր երեցփոխ ընտրելու։ Ժողովը կանոնաւոր էր և բազմամարդ։ ընտրութեանը մասնակցում էր մօտ 100 հոգի։ Ձայների մեծամասնութեամբ երեցփոխ ընտրվեց Փիրուզ Իշխանեանը։ Այս ընտրութեանը անմիջապէս յաջորդից վերաստուգող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը. վերջինիս անդամներ ընտրվեցան 3 ինտելիգէնտ անձինք»։

—

ՇԻՆՈՒՀԱՅՐ գիւղից (Զանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Ապրիլի 24-ին մեր գիւղի երիտասարդներից վեց հոգի գնում են մեր անտառը խաղաղ և կռվիզան (կանաչեղէն) քաղելու։ Անտառում յանկարծ երկու սպառազինված թուրքեր յարձակվում են բերդան հրացաններով և սպանում մէկին՝ Դաւիթ Աբգարեանին, իսկ մէկը փախչելիս ժայռից ընկնում է և վտանգաւոր կերպով վիրաւորվում, մնացածները փախչում են։ Սպանվածը ընտանիքի միակ որդին է, որի մահով վտանգվեց այդ ընտանիքի գոյութիւնը»։

—

ՕԼԹԻՑ մեզ գրում են. «Օլթիի գաւառում գտնված հայ գիւղերից ամենաառաջինն է համարվում Բերդուս գիւղը. մենք գոհ ենք մեր քահանայից, որը ջանասէր և գործունեայ մի անձն է. բայց նոյնը չենք կարող ասել մնացած թամրուտ, Ագարակ, Կալգոս և Կոպատ-Օրուկ գիւղերի և երկու միացվելիք գաղութների Բանակ և Օլորի (գաւառամաս) մասին, նրանք երկար տարիներից ի վեր քահանաներ չունեն և ունենալու մասին էլ չեն մտածում»։

—

ԹԱՂԼԱՐԻՑ մեզ գրում են. «Ինչպէս անցած տարիների գարնան, նոյնպէս և այս գարնան, կրկին երևաց մորեխ թուրքաբնակ գիւղերում, որոնց հեռաւորութիւնը մեր գիւղից հանում է մօտաւորապէս 80 վերստի։ Գաւառապետի կարգադրութեամբ պրիստաւը հրամաններ գրեց զանազան հայաբնակ գիւղերին, որոնցից պահանջում էր «չալղուներ» (ցախաւելներ) մորեխը ոչնչացնելու համար։ Այդ հրամաններից մէկն էլ բերվեց մեր գիւղը։ Գիւղում տանուտէր չը լինելու պատճառով, պէտք է հրամանը կատարէր օգնականը նախկին տանուտէրը։ Նա, վարելով 16 տարի տանուտէրական պաշտօն, լաւ էր ըմբռնել ամեն մի գիւղացու հոգին ու զգացմունքը։ Օգնականը բացատրեց հրամանի բովանդակութիւնը, որով պահանջվում է գիւղից 3000 հատ չալղու։ Որպէս զի այս անգամ էլ գրպանը դատարկ չը մնայ, խորհուրդ տուեց գիւղացիներին կապալով տալ և կապալառու հանդիսացաւ էլի ինքը, վերցնելով 120 բուբլով։ Միթէ կարելի է հակառակել պաշտօնեայի խօսքին։ Բայց այս անգամ գործը ուրիշ կերպարանք ստացաւ։ Մի քանի երիտասարդներ կապալը տուին մի պարոնի, որը գինը ցածրացրել էր 80 ր.։ Շնորհիւ մի քանի երիտասարդների, նա էլ չը կարողացաւ առաջվայ դերը խաղալ։ Ինչքան ցանկալի էր, որ այդ պարոնները քիչ առաջ մտածէին գիւղացու դրութեան մասին։ Թէկուզ ուշ է սկսված գործը, բայց շատ գովելի է նրանց եռանդը դէպի գիւղի հարցերը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիւրքիա։ Մակեդոնիայում արդէն նկատվում են պարզ և որոշ փաստեր, որոնք ապացոյց են, որ երկրի ներսում աճում է յեղափոխական շարժումը։ Աժենից ակներև նկատվում է այդ Սալոնիկում. այնտեղի առևտուրը երկրի ներքին մասերի հետ ահա մի քանի շաբաթ է սաստիկ ընկել, նուազել է։ Իսկ դա միշտ ծառայել է իբր նշան լուրջ դէպքերի։ Մի կողմից սկսում են արագանալ բոլգարների ընդհարումներն ուրիշ ազգութիւնների հետ, որ գլխաւորապէս արդիւնք են Թիւրք կառավարութեան դրդումների ու ապստամբութեան երկիւղի։ Միւս կողմից՝ աւստրիական հիւպատոս Միւլլերը, որ մի ժամանակ խիստ լաւատես կարծիք ունէր Միւրցշտէգի դաշնագրի և այնտեղ մշակած բարենորոգումների ծրագիրների մասին, այժմ հրաժարվում է իր պաշտօնից և ոչ մի կերպ չէ ուզում մնալ Մակեդոնիայում։—«Եմէնի ապստամբութիւնը, որ այնքան մեծ աջողութիւնով սկսվեց, ասում է «Frankfurter Zeitung»-ը, հիանալի կերպով կարող է նպաստող հանգամանք լինել մակեդոնական ապստամբութեան համար։ Իսկ եթէ Եմէնի ապստամբութիւնը մեծ չափեր ընդունէ, Միւրցշտէգի դաշնագիրը վերջնականապէս մնանկ կը համարվի, և այն ժամանակ Մակեդոնիայի խաղաղացման գործն ազատամիտ պետութիւններն իրանց ձեռքը կառնեն, գլուխ ունենալով Անգլիան»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր երեկոյեան ժամը 4-ին Վոլժսկի-առևտրական բանկի վարչութեան մէջ վերահաս մահով վախճանվեց իր կաբինէտում բանկի վարչութեան նախագահ Սոլլոգուբը։

ՍՕՐՄՕՎՕ, 5 մայիսի։ Երէկ Մոսկվայի խաճուղու վրա, Կանավինից այն կողմը, այրվեց Բոգէնբլիսի արհեստական բուրդի գործարանը։ Վնասը 100,000 ր. է։ Ասում են, որ պատճառը մի արձակված բանուորի գցած կրակն է։ 400-ից աւելի բանուոր մնացել են անգործ։—Նիժնի Նովգորոդում կառապանները գործադուլ արին։ Նրանք խնդրում են տաքսան կամ սակագինը աւելացնել և վերացնել ոստիկանութեան իրաւունքը ձրիապէս կառքերից օգտվելու։

ՇԱՎԼԻ, 5 մայիսի։ Կաշու գործարաններից յետոյ՝ քաղաքի միւս գործարաններն էլ փակվեցին բանուորների գործադուլի պատճառով։

ԼՈԴԶ, 5 մայիսի։ Հացթուխների գործադուլը վերջացաւ։ Այսօր հաստատ բոլոր հացագործարաններն սկսեցին աշխատանքները։ Ս. Խաչի ծուխի ծխատէր քսէնձը յայտարարեց, որ անկարգութիւնների պատճառով եկեղեցում ժամասացութիւնը կը դադարի։

ԱՐՏԱՏՕՎ, 5 մայիսի։ Սիմբիրի գաւառում լուր է տարածվել, որ Պարադէեվի, Խուխորեվի և ուրիշ տեղերի անտառներում գիւղացիները կատարել են մի քանի խմբական բռնի գործողութիւններ Բելեսկովի և Ֆրոլովի կալուածների ու կայքերի դէմ, որովհետև գիւղացիները արօտատեղեր չունեն և հողերի կապալադինն էլ սաստիկ բարձր է։ Վարչութեան քննութիւնից երևացել է, որ եղել են բողոքի առանձնակի դէպքեր, որոնք առաջացել են կառավարիչների անտակտութիւնից, որոնք հողերի կապալից մեծ տոկոս են ստանում, գիւղացիների սակաւահողութեան պատճառով։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ, 5 մայիսի։ Երէկ առաւօտեան ժամը 11-ին Վլադիկաւկազի երկաթուղու վարպետներն ու բանուորները գործադուլ արին։ Ճաշից յետոյ մի մասն սկսեց աշխատել։ Այս օր գործադուլ արին բոլորը, ոչ մի մարդ չէ եկել աշխատելու։ Վարչութիւնը ժողով նշանակեց, որ բանուորները գան և իրանց պահանջները յայտնեն։

ՍԻՄԼԱ, 4 մայիսի։ Անգլիական միսսիան, մայիսը Մակ-Մահոնի առաջնորդութեամբ, որ ուղարկված էր Աֆղանստանի և պարսկական Սէյիստան նահանգի սահմանները որոշելու, աջողութեամբ կատարեց իր դերը և վերադառնում է Կվէտա։ Սահմանային հարցի կարգաւորումը վերացրեց այն բոլոր հիմքերը, որոնք կարող էին գոյութիւն ունենալ ռուսների միջամտութեան համար Բէնդէր-Աբբաս տանող ուղղակի ճանապարհի հարցում։

6 մայիսի

ՏՕԿԻՕ, 5 մայիսի։ Ինչպէս երևում է հաստատվում է, որ ռուսական էսկադրան աշխատում է Վլադիվոստոկ հասնել ուղղակի ճանապարհով, և այդ պատճառով Տոգոի հետ ընդհարումն անխուսափելի է։ Ֆորմոզայի ջրանցքը բռնված է ականներով։

ՀՕՆԳԿՕՆԳ, 5 մայիսի։ Ջոն-Կվանտուն կըզզու ափերի մօտ պատրաստ սպասում են հրամանի 150 բեռնաւորված ջոնկաներ։ Ենթադրում են, որ նրանք բեռնաւորված են ուտելիքով, որ յատկացված է էսկադրաներից մէկի համար։—Օտար գործակալներն աշխատում են վարձել չինական լոցմաններ։

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 5 մայիսի։ «Մէգօվիա» շոգենաւը մայիսի 2-ին Վաբելլա հրուանդանի մօտ տեսել է ռուսական 42 նաւ, որոնք գնում էին դէպի հիւսիս։

ԼՕՆԴՕՆ, 5 մայիսի։ Ռուս լրագիրների հաղորդած այն լուրի առիթով, թէ անգլիական սինդիկատ է հիմնվում Կովկասում Զէմբրլէնի նախագահութեամբ, Զէմբրլէնը հեռագրեց գործակալութեանը, որ այդ լուրը բոլորովին անհիմն է։

ԿԻԵՎ, 5 մայիսի։ Կանեովի քաղաքագլուխ Տուրինովսկին դատի է մատնված հասարակական և որբերի փողերից մօտ 50,000 ր. վատնելու համար։ Յանցաւորը ձերբակալված է։

ՄՕՍԿՎԱ, 5 մայիսի։ Առաջիկայ ուսումնական տարում զբաղմունքների մասին եղած մինիստրական կարգադրութիւնը հավալարանի պրոֆէսորների մէջ խորհրդակցութիւն է առաջ բերել, թէ ինչպէս վարվի, եթէ դասախօսութիւնները չը վերսկսող պրոֆէսորներին հեռացնեն։—Շատ դերձակների վարպետները գործադուլ արին։

ԱՐՄԱՒԻՐ։ Գործակատարները գործադուլ արին։

ԱՍԽԱԲԱԴ։ Գործակատարները գործադուլ արին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 5 մայիսի։ Կառապանները գործադուլ արին, պահանջելով քարշակի առանձնաշնորհման կրճատում, որովհետև քարշակն իրանց վաստակին ՁՄաս է բերում։

ՈՒՖԱ։ Նահանգապետ Սօկոլովսկու դէմ սպանութեան փորձ արվեց երեկոյեան ժամը 11-ի մօտ։ Նահանգապետը, որ ներկայ էր ներկայացման, անտրակտի ժամանակ խօսակցում էր ծանօթների հետ թատրոնի մուտքի մօտ։ Յանկարծ լսվեց զէնքի մի քանի հարուած։ Նահանգապետը, ծանր վիրաւորված, ոչ մի աղաղակ չարձակելով, արագ անում է մի քանի քայլ և ուժասպառ վայր է ընկնում ու արիւնքամ լինում։ Զէնքի հարուածները նահանգապետին պատճառել են 3 լուրջ վերքեր վզի մասում։ Երկու գնդակներ դեռ չեն հանված։ Մահվան վտանգը դեռ չէ անցնել։

ԺԻՏՕՄԻՐ, 5 մայիսի։ Զուլհակների մեծ մասը աշխատանքները դադարեցրին, պահանջելով վարձագնի յաւելում։

ՄԻՆՍԿ։ Մոսկվա-Բրէստի երկաթուղու արհեստանոցները բանուորների գործադուլը շարունակվում է։

6 մայիսի

